

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Վեհապատ Տեր.

Շնորհավորելով Ամենայն Հայոց Կաթողիկոսիդ ծննդյան 50-ամյակը՝ անսովոր մի զգացում եմ ապրում, որն ինչ-որ տեղ անըմբոնելի է, ոչ երկրային: Ձերևս սա եզակի դեպք է, որ ընձեռված է շնորհավորելու համազգային խոշոր գործչող ծննդյան հորելյանը: Միաժամանակ պահև արժնորվում է նրանով, որ այդ հոգևոր առաջնորդը, գործիքը, անձը մեր դասընկերն ու համազյուղացին է:

1999 թվականի եռկդիմբերի պարմական օրը, երբ Մայր Եկեղեցու զանգերի դողանջների ներքո ի լուր Հայոց աշխարհի ավելիվեց, որ Դուք ընդունված եք Ամենայն Հայոց Կաթողիկոս, մեզանից յուրաքանչյուրը, հպարփության վեհ զգացում ապրելով՝ ակամա հիշեց այն օրերն ու դրահիները, երբ ապրում էինք մանկության և պատանեկության ուրախ և անհոգ օրերը:

Այդ, եին և անմոռաց հիշողությունները վկայում են, որ կամքի ու աշխարհասիրության այն շնորհները, որ ունեիք, անպայման դպաւում էին իրենց արդյունքները: Ծիչը է, որ մենք չէինք կարող պատկերացնել, որ մեր կողքի նսպարանին մնանում է Հայոց ապագա Հայրապետը և Հայոց Եկեղեցու հոգևոր առաջին սպասավորը, սակայն հետպահարձ հայացք գցելով մեր անցած ուղուն՝ այսօր հասկանում ենք և հսկակորեն գիտակցում, որ ասդվածային վիճորինությամբ ամեն ինչ իր դրամաքանական շարունակությունն է ունեցել:

Այսօր երանությամբ են հիշվում այն օրերը, երբ Ձեր դունը դասամիջոցներին դատանում էր մեր ընդմիջման վայրը՝ լինելով անմիջապես դպրոցի կողքին: Երազի նման անցած օրերը, երբ մանկական խանդավառությամբ սպասում էինք Սարգսի դրայի պատրաստած ջամիչներին ու Գրիգոր Քենոն դեղները համբեսելուն:

Նաև երջանկությամբ հիշվում են այն օրերը, երբ Ձեր՝ Եւլուպայում ուսանելու դրահիներին Հայաստան վերադառնալիս այցելում էիր հայրենի գյուղ, գրուցում մեր ժողովրդի և Եկեղեցու արժնությունից, դրանք ամրագրելու և զարգացնելու հետանկարներից: Երբ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս 2001 թ. Ամանորին այցելեցիք Ուկեադի միջնակարգ դպրոց, համազյուղաջիները և աշակերդությունը խանդավառությամբ էին լցվել՝ լսելով Ձեր գալաքյան մասին: Անշուշտ, այդ երջանիկ օրը դեռ երկար կմնա աշակերդության հուշերում, որ նաև դրական ազդեցություն է ունեցել դպրոցի կրթական և բարոյական կյանքում:

Այսօր, երբ աշակերդները հաճախ հարցնում են Ձեր մասին, իրավես հետքադարձ հայացքով են միայն արժնորվում այն քայլերը, որ կատարեցիք Դուք դպրոցական դրահիներին՝ հոգևոր կրթության անցնելով: Համայնական դիրավախության դրահիներին կամքի դրսերման ու նպարակառողջվածության մեծ ուժ էր պահանջվում, որպեսզի շրջանցվեին ընդունված կանոններն ու կանխապաշարում-

ները, մանավանդ հոգևոր արժեքներին փարվելն ու հոգևոր կրթության մեկնելը: Անշուշտ, դա դժվարընկալելի էր նաև մեզ համար: Բայց շուպով՝ Դոգևոր ճեմարանում Զեր ուսումնառության առաջին փարիներին իսկ մենք հասկացանք, որ մեր ընկերն ընդունել է իր ուղին: Ակնհայտ էր, որ Դոգը ոչ միայն ուսանում էիր, այլև ապրում հոգևոր կյանքով՝ վկայելով այն նաև մեզ՝ Զեր դպրոցի և մանկության ընկերներին:

Այսօր, երբ թղթին եմ հանձնում այս մտքերը, հպարփության, ուրախության զգացումները նաև շաղախված են այն հսկակ գիրակցությամբ, որ Զերդ Սրբության ուսերին է ծանրացած Եկեղեցուն և ազգին ծառայելու դժվարին, բայց քաղցր բնոր:

Վեհափառ Տեր. կրկին շնորհավորելով Զեր հիսնամյակը՝ ցանկանում ենք Զերդ Սրբությանը քաջառողջություն և երկար փարիների անխաթար գործունեություն:

Դոգը ընդրվել եք Ամենայն Հայոց Կաթողիկոս ազգի համար շրջադարձային մի շրջանում, երբ ընկերային և քաղաքական բարեփոխությունների բովում ժողովուրդը ցանկացած գործչից մեծ ակնկալիներ ունի, հարկավես հոգևոր գործչից և հոգևորական դասից: ճանաչելով Ձեզ՝ վարակ ենք, որ Ս. Էջմիածինը Ասրծո վնօրինությամբ և Զեր առաջնորդությամբ Հայոց աշխարհի վերափոխման ու վերապարթունքի կենքրոնն է լինելու:

Զեր փարած հոգևոր գործունեությունը եկեղեցական փարբեր աստիճաններում վկայում է այն մասին, որ ոչ մի փարակույս չկա, որ Զեր հայրապետության փարիներին Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը հասնելու են որակական նվաճումների, և մեր բազմաքաջար ժողովորդի ազգային և պետական խնդիրները Մայր Եկեղեցու հոգանակությունն են կրելու: Մեր հայացքը միշտ ուղղված է Լուսավորչի Աթոռին՝ հպարփության, վեհության և զորավիճ լինելու զգացումներով:

Հանուն Ռակեհափի միջնակարգ դպրոցի, դասընկերների և համազյուղացիների՝
որդիական խոնարհությամբ մարդիմ ի համբույր
Զերդ Սրբության Օծական Ս. Աջոյն՝

ՄԱՆՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ